Արձանագրություն N2
ՀՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-64/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք. Արմավիր
Շահումյան 3

12.08.2026թ.
ժամը 12^{00}

Նիստին մասնակցում էին՝

Նախագահ՝ Սեթ Վարդանյան
Անդամներ՝ Արշակ Սաֆարյան
Արմեն Սահակյան
Քարտուղար՝ Արմինե Նավասարդյան

1. Ընթացակարգի հայտերի բացման մասին

Սեթ Վարդանյան

Ընթացակարգի հայտերի ընդունման վերջնաժամկետը եղել է 2026 թվականի օգոստոսի 10-ին ժամը 16^{00}, էլեկտրոնային աճուրդի իրականացման eauction համակարգում աճուրդը սկսվել է 2026 թվականի օգոստոսի 11-ին ժամը 16^{00}, ավարտվել է նույն օրը ժամը 16^{30}:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընթացակարգին հայտերի ներկայացրած կազմակերպությունների մասին

Սեթ Վարդանյան

Ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Գնային առաջարկ ներկայացրած կազմակերպության էլեկտրոնային հասցեն, հվհհ-ն, հասցեն
1	«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ	էլ.փոստ: h5r.gasparyan@yandex.com հվհհ: 01096027 հասցե: Ք.Երևան, Դավիթ բեկի 180/26

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների մասին

Սեթ Վարդանյան

Էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Տվյալներ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերի ընթացակարգի հրավերի պահանջների համապատասխանության մասին

Սեթ Վարդանյան

Նվազագույն գնային առաջարկ ներկայացրած **«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ** մասնակցի հայտի դիմում-հայտարարությունը (հավելված 1) հաստատված չէ, հայտից բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի մասին տեղեկատվություն պարունակող հավելվածը, բացակայում են առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մոդելը, արտադրողի անվանումը; Ինչպես նաև բացակայում է առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, որը պետք է ներկայացվի հստակ տեխնիկական պարամետրերով՝ բացառելով երկակի իմաստ ունեցող բառերը և արտահայտությունները:

5. Ընթացակարգի գնային առաջարկների մասին

Սեթ Վարդանյան

Ընթացակարգի գնային առաջարկները ներկայացվում են.

Չափաբաժնի		Մասնակիցների		Նախահաշվ գին	Վերջին առաջարկ		
N	անվանումը	զբաղեցրած տեղը	անվանումը		Արժեք	ԱԱՀ	Գին
1	մարդատար մեքենաներ	1	«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ	9000000	9000000	0%	9000000

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Նիստը կասեցնելու և ծանուցում ուղարկելու մասին

Սեթ Վարդանյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները նիստը կասեցվում է:

Գնումների համակարգողին. էլեկտրոնային աճուրդի իրականացման համակարգով **«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ** մասնակցին հայտերում առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վայրը, օրը և ժամը հաստատելու մասին

Սեթ Վարդանյան

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2026 թվականի օգոստոսի 14-ին ժամը 11^{00} «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ քաղաք Արմավիր, Շահումյան 3 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ **Սեթ Վարդանյան**

Անդամներ՝ **Արշակ Սաֆարյան**

Արմեն Սահակյան

Քարտուղար՝ **Արմինե Նավասարդյան**